ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

« » ---------- 2016թ. N_____-Ա

ՈՐՈՇՈՒՄ

ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 605-րդ հոդվածով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի «Հողամաս նվիրաբերելու և ամրացնելու մասին» N 109-Ա որոշումը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Երևանի Մանանդյան փողոցի N41 հասցեում գտնվող 933,0 քառ. մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը՝ համաձայն հավելվածի, նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը:

2. Սույն որոշման 1-ին կետում նշված հողամասի սահմանները ենթակա են ճշգրտման՝ հատակագիծ թողարկելու ժամանակ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ- ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի փետրվարի 11-ի «Հողամաս նվիրաբերելու և ամրացնելու մասին» N 109-Ա որոշմամբ առաջարկվել է Երևանի քաղաքապետին՝ Երևանի քաղաքային համայնքի սեփականությունը հանդիսացող Երևանի Մանանդյան փողոցի N41 հասցեում գտնվող 933,0 քառ. մետր մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության հասարակական կառուցապատման գործառնական նշանակության հողամասը նվիրաբերել Հայաստանի Հանրապետությանը՝ շախմատի ակադեմիա կառուցելու նպատակով:

Հաշվի առնելով ՀՀ կառավարության վերը նշված որոշումը՝ Երևանի ավագանու քննարկմանն է ներկայացվում սույն որոշման նախագիծը:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵՈՒՄ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՍԵՐԻ ԷԱԿԱՆ ԱՎԵԼԱՑՄԱՆ ԿԱՄ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՄԱՍԻՆ

«Հողամաս նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևան քաղաքի բյուջեի եկամուտներում և ծախսերում էական ավելացում կամ նվազեցում չի նախատեսվում:

ՏԵՂԵԿԱՆՔ

«ՀՈՂԱՄԱՍ ՆՎԻՐԱԲԵՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՆՈՐՄԱՏԻՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԿՏԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«Հողամաս նվիրաբերելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման անհրաժեշտություն չի առաջանում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ՝ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Հավելված
Երևան քաղաքի ավագանու 2016 թվականի
մարտի -ի N - Ա որոշման

S=2433.0, որից 700քմ+800քմ գլխ. հատակագծեր են

S=933.0



	X	Y	
1	4446236.30	8455539.47	
2	4446255.39	8455531.21	20.80
3	4446291.49	8455506.05	44.00
4	4446305.14	8455494.82	17.67
5	4446319.64	8455526.76	35.08
6	4446316.02	8455537.74	11.56
7	4446301.90	8455544.52	15.66
8	4446294.88	8455541.28	7.73
9	4446289.62	8455540.55	5.31
10	4446286.14	8455542.19	3.85
11	4446252.14	8455558.13	37.55
12	4446245.68	8455561.15	7.13
1	4446236.30	8455539.47	23.63

Նպատակային նշանակություն

Գործառական նշանակություն

Բնակավայրերի
խառը կառուցապատում

Հավելված

Հավելված